

3435, 3436
3437, 3438
3439

281

6-71 1917

2001

2010

21

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՓՈԴՈՑ. ԹԻԻ 12

Կը վաճառուին ամէն տեսակ բուղթ, տեսակ,
դպրոցական, վաճառականական պիտոյք եւ գրեան
ամէն լեզուէ:

Պատաստուրինք տալովս զորոնց:

Հաւ ապրանք, չափաւոր գին:

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ԼԵԻՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ Բ. ՄԱՍ

Գին 50 Փարայ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԼԵԻՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՍՆ Բ.

ԾԱԽՈՒ ԱՊՐԱՆՔ

معارف نظارت جليله سنك رخصتيله طبع اولمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Զամադգրդար Յակոբեան Խան

1893

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

347.3

ՆԵՐՈՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՍՆ Բ.

ԾԱԽՈՒ ԱՊՐԱՆՔ

معارف نظارت جليله سينك ۱۲۸۷ نومرولى رخصتنامه سيله طبع اولتمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐԱԳԻԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Զամագերլար Յակոբեան Խան

1893

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


11046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



10067-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ժողովրդեան բարոյական փառանքներն
որդեալ ահա կը հրասարակեմք ժողովրդական
սեփեռու երկրորդն եւս որ է Ամուսնական խնդրոց
Բ. մասն. Երրորդն Էրիկ-Կնիկ, կը հրասարակուի
ընդ փոյր:

Կը յուսամք թէ այս սեփեռն եւս պիտի գտնէ այն
ընդունելութիւնն որուն արժանացաւ առաջինն:

Կ. Գ. Զ.

Ամուսնական Խնդիրներ

ՄԱՍՆ Բ.

ԾԱԽՈՒ ԱՊՐԱՆՔ

Ընտանեկան կեանքը կը կազմեն ամուսնութիւնները։ Ամուսնութիւն մը այնչափ աւելի իր նպատակին կը ծառայէ՝ որչափ էրիկ կնկան իրաւունքները բացարձակապէս հաւասար նկատուին։ Այդ իրաւունքներու շարքը կը սկսի նախ, ամուսնութենէ առաջ, ընտրելիներու տալիք փոխադարձ հաւանութեամբը։ Էրիկ մարդոց վրայ խօսեցանք մեր առաջին տետրակին մէջ, ուրեմն այս անգամ խօսքերնիս պիտի մասնաւորենք կիներուն վրայ։

Մեր աղջիկներու ամուսնութեան առթիւ մինչեւ հիմա ՚ի գործ դրած ենք շատ մը զեղծումներ, որոնք ուղղակի հետեւանք են կնոջ նկատմամբ կազմուած ծուռ գաղափարին։ Այդ ծուռ գաղափարին ուժովը՝ աղջիկ մը իրաւունք չունի իր սպազայ կենակցին ընտրութեան հեղինակօրէն մասնակցելու. իրեն զեկուցում մը կը տրուի լոկ, որուն, իբր պարկեշտ աղջիկ, պէտք է լռելեայն համակերպի՝ առանց երկար բարակ սերտելու ներկայացող անձին նիւթական, ֆիզիքական, բարոյական ու մտաւորական արժանիքը։ Իսկ թէ որ աղջիկ մը՝ իրեն եղած ծնողական առաջարկը մերժելու չափ յանդուգն ըլլայ՝ այդպիսին ընդհանրապէս ոչ միայն հասարակաց բամբասանքի առարկայ կը դառնայ՝ այլ նաեւ իր մերժումին մէջ ալ չէ կարող յաբատեւել, զի այս պարագային մէջ աղջկան ծնողք եւ ազգականները բարոյական այնչափ ծանր ճնշումներ կը բա-

նեցնեն անոր վրայ՝ որ վերջ 'ի վերջոյ կը հարկադրուի տեղի տալ՝ զո՛հ ըլլալով ծնողական յամուսութեան եւ հասարակաց կարծիքին:

Առանց աղջկան կատարեալ եւ ազատ հաւանութեան զանի ամուսնացնելը շատ մը աղէտներու դուռ բացած է մինչեւ ցարդ: Ի հարկէ ծնողք իրենց զաւակներուն չարիք չեն կամենար, բայց որովհետեւ ընդհանրապէս ծուռ գաղափար կազմած են ամուսնական երջանկութեան վրայ՝ իրենց ընտրութիւնները մեծ մասամբ փաստակար ընտրութիւններ կ'ըլլան:

Քանի մը մոլոր համոզումներ կան, առածի կարգ անցած, զորոնք եթէ կարենայինք բոլորովին արմատախիլ ընել տգէտ ծնողքներու խելապատակէն՝ ապահովապէս մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայինք աղջկներուն: Այս համոզումներն են — « Աղջիկ ըսածդ ժամանակին տեղը կը վայլէ: » « Սըրամէթը փախցունելու չէ: » « Զակտին գիրը ինչ է նէ՛ ան կ'ըլլայ: » « Ամէնքէն առաջ՝ քսակը լեցուն ըլլայ: » « Ածան հաւը կոկոսն կ'ըլլայ: » « Կարգուի նէ՛ ձոնբու կը մտնայ: » եւայլն: Այս նախադասութիւններուն մէջէն երկու գլխաւոր գաղափար դուրս կը ցլանայ Ա. « Աղջիկ մը կը ծնի ու կը մեծնայ՝ մի'այն կարգուելու հաւատ: (Բ) Աղջկան մը համար լաւագոյն էրիկը այն է՝ որ ամենեւն շատ դրամ ունի: Եթէ այսպիսի գաղափարներ մեզի առաջնորդ ընդունելով ճանբայ ելլանք՝ հետեւանքը գծուար չէ գուշակել: Մենք հոս կ'ուզենք նկատողութեան առնել այնպիսի պարագաներ որոնք մեծ դեր կը խաղան ամուսնական ընտրութեան մը մէջ եւ որոնք սակայն յաճախ զանց առնուած են դժբաղդարար:

1. Ֆիզիկական վիճակ. — Երբ երիտասարդ մը ամուսնանալու կ'ելլէ՝ ընդհանրապէս միտքը կը զննէ որ գեղեցիկ կնոջ մը հետ կարգուի, թէպէտ ասիկա արգելք մը չէ որ իր առած կինը տգեղ ըլլայ . . . : Երիտասարդին գեղեցիկ այս զգացումը ամէն մարդ բնական կը գտնէ: Բայց

զանք օրիորդին: Աղջիկ մը իրաւունք ունի՞ գեղեցիկ զգացումը ունենալու եւ պահանջելու որ իր ամուսինը վայելուչ ըլլայ: Մեր մայրերը այս իրաւունքը պացած են իրենց աղջկներուն. « Էրիկմարդուն աղւորը ի՛նչ ընեմ, քսակը աղւոր ըլլայ » կ'ըսեն. ասոր համար իրենց ներկայացած փեսացուն ֆիզիքական վիճակը բնաւ նշանակութիւն չունի իրենց աչքին: Իրենց այս համոզումը դարձեալ զմեզ կ'առաջնորդէ կնոջ մասին կազմուած սա նախնական գաղափարին թէ, կինը բարոյապէս հաւասար չէ էրիկ մարդուն, զի թէ՛որ կինը բարոյական արարած մըն է՝ ուրեմն զգացումներ ունի. եւ թէ՛որ զգացումներ ունի՝ ապա ուրեմն գեղեցիկին զգացումն ալ պէտք է ունենայ եւ հետեւաբար իրաւունք վայելէ սիրուն ամուսնի մը հետամուտ ըլլալու: Տգեղ երիտասարդ մը գոնէ պէտքէ ինքը այս ճշմարտութիւնը ըմբռնէ եւ աչք չունենայ այնպիսի օրիորդի մը որ իրմէ շատ գերազանց գեղեցկութիւնով մը օժտուած է. զի կրնայ ըլլալ որ ծնողք, իր նիւթական կարողութիւնէն արքիւ, այդ աղջիկը իրեն տան. բայց ամուսնութենէ յետոյ տարակուսելի է որ անոնք երջանիկ ըլլան. խնդիրը կը փոխուի երբ աղջիկ մը իր ամուսնին վրայ ֆիզիքականէն տարբեր գեղեցկութիւններ տեսնել ուզէ, այդ պարագային մէջ իրենց երջանկութիւնը կրնայ անայլալ մնալ. բայց բնաւ պէտք չէ մտքէ հանել թէ աղջիկ մըն ալ իրաւունք ունի գեղեցիկին զգացումը ունենալու եւ փախաւքելու որ իր ամուսինը գեղեցիկ ըլլայ: Այս զգացման զանցառութիւնը յաճախ շատ սուղի նստած է մեր ընտանեկան յարկերուն:

2. Տարիք. — Գտնուած են եւ պիտի գտնուին վաթսուսնամեայ ծերունիներ, այնքան տխմար՝ որ տասն եւ ութը տարեկան աղջկան մը հետամուտ ըլլան: Շատ քիչ ծնողքներ դժուարութիւն պիտի յարուցանեն այսպիսի ամուսնութեանց գէմ: Ծնողաց մեծամասնութեան համար նրկատողութեան արժանի պարագան՝ դրամն է միշտ, « Մեր ըլլալով ի՛նչ կ'ըլլայ, քեամիլ, աղայի պէս մարդ է: » Ի՛նչ

երջանկութիւնն կ'աղնկալէք այսպիսի միութիւններէ : Մին՝ երիտասարդութիւնն, գեղ, կորով. միւսը՝ ծերութիւնն բըթացում, ապկարութիւնն. մին՝ առօրե իր գաղափարներով ու գգացումներով. միւսը՝ թուլցած իր տարտամ ու տըկարացած իմացականութեամբ եւ չորցած, քայքայուած գգացումներով. մին՝ կեանքի գարունը. միւսը՝ կեանքի ձմեռը : Ի՞նչ հասարակաց կապ կոնայ մնալ այս երկու էակներուն մէջ՝ որոնց կեանքը սակայն օրէնքով այսպէս իրարու չղթայուած է :

Այդպիսի յարկի մը մէջ կռիւը ու նախանձը անպակաս պիտի ըլլան : Յիմար ծերունին ինքն ալ չէ կարող ո՛ր եւ է կերպով երջանիկ ըլլալ. իր երիտասարդ կնոջ շուրջը պիտի սքեցան յաճախ ուրիշներ՝ անոր պէս երիտասարդ ու վայելուչ. եւ ինքը, անկարող զանոնք հեռացնելու, անկարող անոնց պէս իր կնոջ համակրութիւնը չարժեքելու՝ այդ ծերունին իր կեանքի մնացորդը բարոյական մեծ տանջանքներու մէջ պիտի անցունէ, որոնք չեն փոխարինուիր գեղանի կնոջ մը օրինապէս տէր ըլլալու հաճոյքին : Տարիքներու տարբերութիւնը պէտք է աննշմարելի ըլլայ, այնչափ միայն՝ որչափ սեռային կազմութեան տարբերութիւնը կը ներէ. անկէ աւելին մեղք մըն է բնութեան դէմ, որ գիտէ իր վրէժը լուծել մեղանշողներէն : Ասոր փորձերը քանի քանի անգամներ տեսած ենք առանց մեր բնթացքը մտղի չափ փոխելու :

3. Բնաւորութիւն. — Ամուսնութեան մէջ թերեւս ամենէն առաջին տեղը կը բռնէ այս կարեւոր խնդիրը. էրիկ կնկան բնաւորութիւնները պէտք է իրարու յարմարին : Երբ բնաւորութիւնները համաձայն են՝ ինչ որ դարձեալ գաղափարի համաձայնութիւն կ'ենթադրէ՝ ալ ուրիշ բանէ մի վախճաք, անոնք կրնան երջանիկ ըլլալ : Բայց, երեւակայեցէք ամուսին մը, որ կռուարար է, գիւնում, ի բնէ դաժան գգացումներով գինուած, պզտիկ, աննշան առիթի մը կ'ըստապէ իր կնոջ սիրտը չարաչար փրատորելու, որ, ամէն տեսածին, ամէն լսածին կը խօսի. երբ կռուի նիւթ չկայ, ինքը կը ստեղծէ գայն : Այսպիսի

ամուսին մը կրնայ բնառնական յարկին երջանկութիւն պարգեւել : Եթէ կինն ալ իրեն պէս է՝ այդ տունը դժոխք կը դառնայ. իսկ եթէ ագնուարարոյ ու համեստ է՝ այն ատեն ծածուկ կը սեղմէ սրտին մէջ իր վիշտը, որ, կադնիի մը կոճը կրծող որդին պէս, կը կրծէ, կը սպառէ անոր մարմինը. եւ այդ խեղճ, բարի կինը, գուցէ առանց իսկ մէկու մը հաղորդելու իր անսահման վիշտին գաղտնիքը՝ օր մը գերեզմանին դուռը ափ կ'առնէ վերջապէս :

Երբ ծնողք իրենց աղջիկը ամուսնացունելու կը ձեռնարկեն՝ պէտք է, ամեն բանէ առաջ, փեսացունին բնաւորութիւնը նկատողութեան առնեն : Այս պատուաբեր վկայութիւնն ալ դժբաղդաբար չենք կրնար տալ շատ մը ծնողքներու : Մարդիկ կան որ իրենց դաժան բնաւորութիւնովը իրենց խեղճ կնոջ մահուան պատճառ ըլլալէ յետոյ, նոյնչափ դիւրութեամբ ուրիշ կին մը կը գտնեն, գուցէ աւելի գեղանի կամ աւելի մանկամարդ քան թէ առաջինը : Գաղտնիքը — Անոր համար որ հարուստ են կամ այնպէս ըլլալ կը կարծուին : Դրամի այդ գետնաքարչ սէրը տեսակ մը հիւանդութիւն դարձած է շատ մը ծնողքներու համար : Ողջմտութեան ու կրթութեան պակասը դժբաղդաբար այսպիսի յիմարութիւններ գործել կուտայ անոնց. իրենք ալ, իրենք ալ յետոյ կը գզջան, բայց ի՞նչ օգուտ : Ասոր հետ մէկտեղ, փորձը՝ մեր խելքը գլուխը չափաւ բերէ եւ դէշ բնաւորութեան տէր մարդիկը միշտ պիտի քաջալերենք մենք, բաւական է որ դրամ ունենան . . . :

4. Մտւոր զարգացում. — Բարոյական վիշտեր կան որք աւելի մարդս կը չարչրկեն քան ֆիզիքական յայտնի ցաւեր ու տանջանքներ : Այդ վիշտերէն մէկն է՝ մշտնջենաւորապէս կապուած ըլլալ այնպիսի մարդու մը հետ՝ որուն մտաւոր զարգացումը երբեք չի հաւասարիր քուկինիդ :

Դարուս պահանջքն է ուսեալ ըլլալ : Տգէտ ծնողք՝ դաստիարակութեան բուն նպատակը ըմբռնելու անկարող իր արտաքին արդիւնքներէն միայն կը դատեն գայն : Այսպէս, իրենց մանչ զաւակաց ուսում կուտան՝ որպէսզի

անոնք դրամ չահին, եւ իրենց աղջիկներն ալ կը կրթեն՝ որ-
պէսզի կարենան շուտով ամուսնացնել: Եւ որովհետեւ տգէտ-
ծնողաց կրթական գաղափարները ասիէ անդին չեն անցնիր՝
կը պատահի որ, առանց վարանելու իրենց ուսեալ աղջիկ-
ները կնութեան տան՝ տգէտ, անմշակ մարդոց, որոնք
սակայն հարուստ ըլլալու առաւելութիւնը ունենան: Հիմա,
երեւակայեցէք զարգացած մտքի տէր կին մը՝ ամուսնական
կապերով միացած՝ տգէտ էրիկ մարդու մը հետ: Որքան
բարձր պիտի ըլլան մէկուն ձգտումները, եւ որքան գետ-
նաքարչ ու դժուճ՝ միւսին ըմբռնումները: Երբէք, երբէք
չպիտի կրնան զիրար հասկնալ: Կինը, զարգացած կինը,
բնականաբար պիտի ուզէ մտքի հեղինակութիւն ունենալ
ամէն բանի վրայ. գաղափարները այս կերպով իրարու
պիտի բաղխին. միոյն՝ թա՛րմ, լա՛յն, ողջամիտ, իսկ միւսին
տգե՛ղ, փտած, մքըտած գաղափարները: Եւ այս գաղա-
փարներու կռուին մէջ՝ ամուսինն է որ յաղթող պիտի
հանդիսանայ իր նիւթական բազմակողմանի ուժերովը: Եւ
յետոյ, որչա՛ր անտանելի բան կնոջն համար՝ երբ իր
մշտնջենաւոր ընկերին հետ չէ կարող գաղափարի ընկե-
րակցութիւն վայելել: Այս երկու էակները, օրէնքով իրա-
րու միացած, մտքով ու սրտով միշտ իրարմէ հեռու պիտի
ապրին: Էրիկը չպիտի տեսնէ այն հլու հաճոյակատարու-
թիւնը զոր տգէտ կինը ունենայ թերեւս իրեն համար.
կինը չպիտի զգայ այն գորովը ու համակրութիւնը՝ զորս
գաղափարներու եւ զգացումներու ներդաշնակութիւնը կը
ստեղծէ: Այս կերպով, երկուքն ալ դժբաղդ պիտի ըլլան.
բայց կնոջ վիճակը աւելի դառն է, քանի որ աւելի խորա-
պէս ու գիտակցաբար պիտի զգայ:

Կը սիրէք ձեր աղջիկները, չէ՞ք ուզեր որ անոնք բա-
րոյապէս տառապին. իրենց մտաւոր զարգացման հաւա-
սար զարգացում՝ ունեցող երիտասարդներու հետ ամուս-
նացուցէք զիրենք:

5. Առողջական վիճակ. — Լուրջ նկատողութեան ար-
ժանի խնդիր մըն է նաեւ՝ փեսացուն առողջական վիճա-

կը: Վերջին 10-15 տարիներուն մէջ, մեր երիտասարդու-
թեան կազմը սկսած է բաղդատաբար տկարանալ. ախտե-
րը կը սկսին հետզհետէ աւելի յաճախել մեր մէջ: Հասա-
րակութեան մը ծաղիկը, ժողովուրդի մը հոգին երիտա-
սարդութիւնն է. առողջ երիտասարդութիւնը առողջ սե-
րունդ մը պիտի արտադրէ իսկ ախտաւոր երիտասարդու-
թիւնը՝ տկա՛ր, վատառո՞ղջ սերունդ մը: Այդպիսի սերունդ
մը մտաւորապէս փճացած պէտք է նկատել, քանի որ
մարմնի առողջութիւնը ուղղակի կը ներգործէ խմացական
գործողութիւններուն եւ զգացումներուն վրայ: Կ'արժէ
ուրեմն որ մեր ընկերաբանները լրջօրէն նկատողութեան
առնեն երիտասարդութեան մէջ հետզհետէ մուտ գտնող
ու մեծ համեմատութիւններով ծաւալող զանազան ախ-
տերը:

Հիւանդութիւններ կան՝ զորս աղջիկները երբէք չպիտի
ունենան եւ երբէք չպիտի ներենք անոնց որ ունենան. եւ
սակայն երիտասարդութիւնը՝ այդպիսի հիւանդութիւններէ
վարակուելու ամենօրեայ վտանգին մէջ է: Բնութիւնը սա-
կայն իր գործը զիտէ: Երբ մէկ կողմէն կնոջ տուեր է
այնպիսի կազմութիւն մը որով հարկադրուած է էրիկմար-
դուն այս տեսակէտով վայելած ազատութենէն զրկուելու՝
միւս կողմէն պատիժ մըն ալ սահմաներ է էրիկմարդուն՝
երբ սա իր ազատութիւնը չարաչար գործածէ: Հա՛րկ է
ըսել թէ բնութեան այս պատիժը ո՞րքան սուղի նստած է
մեր երիտասարդներուն:

Երբ ախտաւոր երիտասարդներ կ'ամուսնանան՝ ո՛չ մի-
այն իրենց կիները՝ հապա աւելողջ սերունդ մը կը թունա-
ւորեն: Շատ հազուադիւտ են այն խղճամիտ երիտասարդ-
ները՝ որոնք իրենց առողջական վիճակին գիտակից՝ անմե-
ղի մը արիւնը չի մտնելու համար սպասեն իրենց կատար-
եալ ապաքինութեան:

Մնձղքներ, ախտաւոր երիտասարդները ձեր զլխուն
մազէն շատ են. ձեր աղջիկներուն ամուսնութեան առթիւ
պէտք է աչքերնիդ չորս բանաք: Եւ սակայն, պիտի տ-

աւարկէք, ինչպէս կարելի է ամէն ժամանակ անվրէպ տեղեկանալ երիտասարդի առողջական գաղտնիքին: Իրաւունք ունիք, բայց գաղափար մը թելադրեմ ձեզ. ամէն անգամ որ փեսացու մը ներկայանայ՝ անոր առողջական վիճակը բժիշկին քննել տուէք. եւ միմիայն բժիշկին վկայագիրն ունենալէ յետոյ աղջիկնիդ վստահեցէք ձեր փեսացուն: Այս միջոցը տմարդի է, այնպէս չէ. փեսացուի մասին այսչափ խստապահանջ ըլլալ, մինչ անիկա, մանաւանդ թէ նիւթապէս կարող ըլլալով հանդերձ, մեր աղջկան հետ ամուսնանալու շնորհը կ'ընէ մեզ: Չէ, մեր ծնողքները այդչափ անքաղաքավար չալիտի ըլլան...:

Բայց երբ երիտասարդը ախտաւոր է՝ ինչ ընեմ, մայրիկ, ես անոր հարստութիւնը: Աղջիկդ այժմ մեռաքսնեւրու եւ ժանեակներու մէջ ծածկուած է. կուրծքը եւ դաստակները մարգարիտներ եւ գոհարներ կը զարդարեն. ծառաներու կը հրամայէ այժմ եւ կառքեր ունի իր տըրամադրութեան տակ. բայց կը տեսնես որ այդ վարդի պէս թարմ աղջկանդ այտերը կամաց կամաց կը տոճգունին, զուարթութիւնը՝ կ'անհետանայ, ստամոքսը՝ կերակուրներու նեղ շրջանակի մը մէջ կը շղթայուի. չի կրնար մինչեւ իսկ նորածին երախան ազատօրէն գրկին մէջ սեղմել, եւ իր մայրագործով տաք համբոյրներով ծածկել անոր փափուկ այտերը, որոնք սակայն իր տղայութեան այտերու գունազեղ կարմրութենէն զուրկ են...: Մի՛ ըսէք թէ ընտանեկան այսպիսի կեանք մը երջանկութեան բոյն մըն է:

6. Նիւրաւիան վիճակ. — Պէտք է փեսացուն նիւթական կարողութիւնը նկատողութեան առնել — Անտառակոյտ: Երբ երիտասարդ մը կ'ամուսնանայ՝ իր վիճակին համեմատ իր ընտանիքը պահելու կարող ըլլալու է. ցորչափ այդ կարողութենէն զուրկ է փեսացուն՝ թէ՛ ինքը եւ թէ՛ իր կինը խեղճ կ'ըլլան: Այս մասին ծնողաց ցոյց տրուած հոգածութիւնը զնահատելի է. միայն թէ պէտք է դատաւարտենք այն ծայրայեղ եռանդը որով լոկ նիւթականի պոչէն բռնելով անտես կ'ընենք ուրիշ այնպիսի կարե-

ւոր յատկութիւններ՝ որոնք նիւթականն առաջ եւ անկէ աւելի՝ փնտռուելու են:

Բայց հոս ուրիշ կարեւոր հարց մըն ալ կը ներկայանայ մեզ: Մինչեւ ո՞ր աստիճան հիմնաւոր են ծնողաց ստացած տեղեկութիւնները իրենց փեսացուն նիւթական կարողութեան վրայ: Շատ անգամ աչքի զարնող թերութիւններ կը պարտկուին ոսկիի հմայքին տակ, բայց յետոյ որչափ մեծ կ'ըլլայ յուսախաբութիւնը երբ այդ ոսկին ալ նոյն իսկ գոյութիւն չունենար: Վաճառականի կամ սեղանաւորի անուշով ինչ ողորմելի մարդիկ կը ներկայանան յաճախ մեր ընտանեկան յարկերը: Խըշախուզը իր ամենէն պերճախօս բառերը կը գործածէ անոնց նիւթականը որակելու համար. անոր խօսքովը՝ այդ մարդիկը կ'ունենան այն պիսի հոյակապ կալուածներ, այնչափ հազարներով ոսկի, որոնց նմանը գուցէ իրենց երազին մէջ իսկ տեսած չունին. եւ լուրը կայծակի պէս կը տարածուի թաղին մէջ « Այս ինչին աղջկը հարուստ դրսեցի մը կ'ուզէ կոր: » Վաճառական ըսածնին՝ ասոր անոր վարկովը օրապահիկը հայթայթող խեղճ յանձնակատար մըն է գուցէ, կամ սեղանաւորը՝ 40-50 ոսկիէն աւելի չունեցող պարզ լումայափոխ մը...: Լաւ կ'ըլլայ ծնողաց յիշեցնել թէ իրենց կեանքը տարիներով առեւտրական հրապարակին վրայ անցուցած մարդիկն անգամ ճշդիւ չեն կարող գիտնալ այսինչ վաճառականին կամ այսինչ սեղանաւորին նիւթական վիճակը. շատ անգամ կը տեսնուի որ միայն 5000 ոսկի կ'եւլայ այն մարդէն՝ որմէ 15000 կը սպասուէր. քանի՛ քանիներ իրենց նիւթական կարողութեանը մասին չափազանցուած գաղափարներ ներշնչած են հրապարակին, մինչդեռ զրեթէ ոչինչով գործ կը տեսնէին, պարզապէս ուրիշին վարկէն ոչինչով գործ կը տեսնէին, պարզապէս ուրիշին վարկէն կամ վստահութենէն օգտուելով: Կը տեսնուի ուրեմն թէ, ծնողը միշտ վերապահութեամբ ընդունելու են փեսացուներու նիւթականի մասին իրենց հաղորդուած պատմութիւնները:

Բայց ենթադրենք թէ ծնողը, իրենց աղջկանց ամուսնութեանն առթիւ, սրտանց փափագին նկատողութեան առնել այն ամեն պարագաները՝ զորոնք անհրաժեշտ նկատեցինք ընտանեկան երջանկութեան, պիտի կրնա՞ն, արդի պայմաններու մէջ, յաջողութեամբ ստակել իրենց առաջադրութիւնը: — Չենք կարծեր: Տիրող դրութիւնը բոլորովին աննպատ է այսպիսի առաջադրութեան մը համար: Մենք հիմա մեր փեսացուները կ'ընտրենք այնպիսի չրջանակներէ որոնք մեծաւ մասամբ մեզի անծանօթ կը մնան. եւ մեր հարցումորձերը որքան ալ մանրակրկիտ ու խզճամիտ ըլլան, դարձեալ անբաւական են պէտք եղածին չափ մօտէն ծանօթացնելու մեզ՝ մեր ընտրելին: Մեր տեղեկութիւնները պիտի քաղենք ի հարկէ փեսացուն ծանօթներէն, որոնք կամ իր բարեկամները պիտի ըլլան կամ թշնամիները. եթէ բարեկամ են՝ անոր թերի կողմերը պիտի ծածկեն. իսկ թէ որ թշնամի են՝ իր չունեցած թերութիւնները վերագրեն իրեն, ուրկէ՞ գտնենք այնպիսի բարեկամներ, կամ այնպիսի թշնամիներ՝ որոնք, գերազանց ուղղամտութիւնով մը օժտուած, ամէն պարագայի մէջ ճշմարտութիւնը միայն խոստովանին:

Սեպենք որ փեսացու մը ներկայացած ատեն մեր աղջիկներուն կատարեալ ազատութիւն տանք իրենց հաւանութիւնը յայտնելու. անպատեհութիւնները կրնա՞ն մէկ օրէն միւսը անհետանալ: Դարձեալ ոչ, արդի դրութիւնը դարձեալ պատուար մը կը հանդիսանայ չարիքներու բարձման. զի աղջիկը ինչ կերպով կրնայ իր ազատ հաւանութիւնը տալ այնպիսի ընտրելի մը մասին՝ զոր կեանքին մէջ գուցէ առաջին անգամ կը տեսնէ: Օրինակով մը ընդլայնենք, եթէ կը հաճիք, տիրող դրութիւնը:

Պարոն Մ. քսոն եւ հինգ տարեկան երիտասարդ մըն է ու կ'ուզէ ամուսնանալ: Իր մտատիպարն է տաան եւ եօթն տարեկան գեղեցիկ աղջիկ մը որ գտնէ տուն մը եւ հարկըրիսուն ոսկիի չափ ալ դրամօժիտ ունենայ. ասկէ աւելին աչք չունի Պարոն Մ. եւ մօրը կը յանձնարարէ որ

այսպիսի աղջիկ մը գտնելու համար աչքը չորսդին պտուտունէ: Իր այս մտադրութիւնները գուցէ ծանօթի մըն ալ հաղորդելու անխոհմութիւնը ունեցած ըլլայ. եւ ահա քանի մը օր յետոյ չա՛ր, դուռն է. սեւեր հագած, յիսուն հին յիսուն եւ հինգնոց կնիկ մը կը ներկայանայ իր մօրը. «բարեւ խաթուն, հրամանքդ ինձի չես ճանչնար ամա, էս քեզ կը ճանչնամ. իմացայ որ տղուդ աղջիկ կը փնտռես կոր եղեր. էս խըրախուզ եմ. այս ինչ գեղը 500 ոսկով ըտընտիկ, աղւորիկ աղջիկ մը կայ, փախցունելիք խրտակի չէ. մէյ մը երթանք տեսնենք» - Որոշուած է. յաջորդ կիրակին, մայր ու զաւակ, խըրախուզ կնիկն ալ միասին, կ'ելլեն աղջիկուես կ'երթան. հարկ է ըսել թէ այս երկու ընտանիքները իրարու բոլորովին անծանօթ են. աղջիկն կ'մանջը առաջին տնգամ ըլլալով զիրար կը տեսնեն. կէս ժամու մէջ զիրար պիտի քննեն զիրար պիտի դատեն. բայց այս քննութիւնը աւելի մանչուն եւ իր մօրը կողմանէ պիտի կատարուի. քերականութեան կամ թուարանութեան քննութիւն չէք հասկնար անշուշտ. այլ ըսկ հետազոտութիւն մը աղջկան մարմնական շարահերուն—հոսակը ձեւը. տարիքը, գէմքի արտայայտութիւնը, ասոնք բոլորն ալ ուշի ուշով կը դիտուին ու կ'ուսումնասիրուին — Չէ, աս աղջիկը չէ՛ղաւ, ուրիշին նայինք: Եւ խըրախուզը զիրենք ուրիշ տուն մը կ'առաջնորդէ. առջինին չափ անծանօթ — Հոն ալ մի եւ նոյն հետազոտութիւնը. այն ալ չի յարմարիր — Վերջապէս, ամիսներով գիւղէ գիւղ, տունէ տուն պտտելէ յետոյ հուսկ ուրեմն կը գտնեն իրենց ուզածին պէս աղջիկ մը. եւ կը սկսի սակարկութիւնը — Դրամօժիտի կենսական սակարկութիւնը — Աղջկան ծնողքը սա չափ կուտան, մանչուն կողմանէ նա չափ կ'ուզեն. միջնորդը ահա մէջ կը նետուի. անոյ խօսք մը մէկուն, յանդիմանութիւն մը միւսին. եւ զործին համեմատ սակարկութիւնը կամ կը յաջողի կամ կը խզուի:

Այսպէս եղած են ընդհանրապէս մեր ամուսնութիւնները. ու երբ կը մտածեմ՝ չեմ կարող մտքէս վանել բազ-

դատութիւն մը ամուսնանալիք աղջկան եւ ծախու ապրանքին միջեւ, բացատրեմ. Վ... Աղան շուկան խանութպան է ու ջերմապէս փափագող՝ աժան, ֆէյքթիւ ապրանք գրնեւու. միջնորդներ, տաանեակներով խանութը կը պաշարեն — Վ... աղա, այս ինչ խանը ապրանք մը կայ, քու բերնիդ խարճն է. եկու չը փախցնենք. Վ... Աղա, այս ինչին քովը ապրանք մը կայ, թէ՛ աժան, թէ՛ մօտա, թէ՛ գիմացկուն, եկու մէյ մը տես: Եւ Վ... Աղան օրերով շաբաթներով կը պտտի խանութէ խանութ, մէկ խանէն միւսը. ուշադրութիւնով կը քննէ ապրանքին կերպարը, գոյնը, նկարները եւայլն. ու վերջապէս կը հաւանի անոնցմէ մէկուն. հիմա կը մնայ սակարկութիւնը. ապրանքին տէրը սա՞ գինը կ'ուզէ. Վ... աղան նա՞ չափ կուտայ, միջնորդը ահա իրենց մօտն է. մէկուն անոյշ խօսք մը. միւսին յանգիմանութիւն մը. եւ գործին համեմատ սակարկութիւնը կամ կը յաջողի կամ կը խզուի:

Ինչ է այս երկու ապրանքներուն տարբերութիւնը — Մին շնչաւոր ապրանք է, իսկ միւսը՝ անշունչ. ես ասկէ զատ ուրիշ տարբերութիւն չեմ տեսած:

* *

Պառաւ կիները կ'ըսեն թէ հարսանիք կամ ծաղիկ հանելը պարտք մըն է. ասոր համար պատուաստին կարեւորութիւնը չեն ըմբռներ — «Աստուծոյ ձեռքէն ո՞ր պիտի փախչինք, պարտքերնիս է, ո՞ւշ կանոնիս հարսանիք ալ պիտի հանենք, ծաղիկ ալ: Հիմա մենք ասոր պէս գաղափար մը կազմած ենք աղջիկներու ամուսնութեան վրայ. աղջկան պարսֆն է ամուսնանալ, ուշ կամ կանոնիս: Բայց այս գաղափարին ինչո՞ւն մի փնտռէք, պատասխանը նոր բացատրութիւն մը չպիտի կրնայ տալ. աղջիկը ինչո՞ւ աստիճանութիւնն է, չէ՞ մի որ ամուսնանալու համար. նախաստիճանութիւնն... Մանչերու ամուսնութեան ըմբռնումը թէպէտ ոչ այնքան անհասկանալի՝ բայց հաւատարապէս

սխալ է. մանչերն ալ — բացառութիւններուն խորին յարգանք — ընդհանրապէս կ'ամուսնանան շոյ սեռային հաճոյքի համար:

Իսկ թէ ինչ է այս մասին մեր տեսութիւնը, ներեցէք որ պարզենք զայն: Նախ, ամուսնութեան ըմբռնումը նոյնը պէտք է լինի հաւասարապէս աղջկան ու մանչուն համար. այսինքն, ինչ պատճառներէ որ երիտասարդը կը թեւադրուի ամուսնանալու՝ նոյն պատճառներէն կը թեւադրուի նաեւ աղջիկը: Սեռային հաճոյքը բնութեան մէկ պահանջն է որ 'ի հարկէ կը մօտէ ամուսնութեան ըմբռնումին մէջ. բայց ուշադրութիւն, անիկայ փոքր մէկ մասը միայն կը կազմէ ամուսնութեան ըմբռնումին. ամուսնութեան նպատակի մեծագոյն մասը կը գրաւէ ուրիշ շատ լայն, շատ վսեմ գաղափար մը — Մարդս 'ի բնէ ընկերական արարած մըն է — մենակեացները բնութեան զարտուղութիւններն են — իբր ընկերական արարած՝ մարդ պէտք ունի բարեկամի. բայց բարեկամ ըսելով անցնիլ չըլլար. ընթերցող, գուն քանի՞ հատ բարեկամ ունենալ կը կարծես. — 10-50-100 հատ պատասխանեալ թերեւս. կը սխալիս, այդչափ շուտ մի ըլլար. այդ քու յիշած թիւերդ ծանօթներու թիւերն են, եւ ոչ թէ բարեկամներու: Գիտէք թէ հիները այս խնդիրը ուսումնասիրութեան նիւթ ըրին իրենց. եւ որչափ գտան կը կարծէք — Մեկ... միայն մեկ հաս բարեկամ կրնայ ունենալ, ըսին, մարդս: Ու թէ որ հիմա անդրադառնաք ձեր բարեկամներու ցուցակին վրայ՝ ապահովապէս շատ մը անուններ պիտի գեղջէք մէջէն, պիտի գեղջէք, պիտի գեղջէք, պիտի գեղջէք մինչեւ որ... բան մը չի մնայ: Բայց ապահովապէս բարեկամ մը պէտք է մեզ. այդ. ինչպէս ըսինք, մեր ընկերային բնութեան մէկ անհրաժեշտ պահանջն է. բարեկամ մը՝ որուն կարենանք սիրտերնիս բանալ, մեր հոգերը, ինչպէս նաեւ մեր ուրախութիւնները, հրճուանքները, պատմել, եւ փոխադարձաբար իր գգացումները, իր

սրտի գաղտնիքները, իր գաղափարները խմանալ, անոնց տէր ըլլալ, ու այս փոխադարձ յարատեւ սրտաբացումին մէջ մինչեւ վերջը ապրիլ միասին, ապրիլ այդ ներդաշնակ կեանքովը, իրարու համար զոհողութիւն ընելու իսկ զիւրապատրաստ այդպիսի բարեկամ մը՝ միայն, միմիայն Կինը կրնայ ըլլալ մեզ համար։ Մեր ծնողքը, եղբայրները, քոյրերը, ազգականները, դասընկերները ապահովապէս մեր բարեկամներն են կամ կրնան ըլլալ։ Ո՞վ կայ մեր ծնողքէն աւելի մօտ մեզ համար. ի՞նչ կայ եղբօրմէ կամ քրոջմէ աւելի անոյշ բան. բայց խոստովանեցէք, պարագաներ կան որ ատեն պիտի բռնադատուինք քաջուիւ նոյն իսկ մեր զօրութեամբ ծնողքներէն եւ սիրասուն եղբայրներէն կամ քոյրերէն։ Մեր մեծագոյն բարեկամը՝ մեր կինը սահմանուած է ըլլալ. բնութեան մէկ գաղտնիքը, եթէ կուզէք, բայց բացարձակ ճշմարտութիւն մը, նուիրագործուած մեծ Աստուծոյ սա մեծ պատուէրովը — Թողցէ այր զհայր եւ ըզմայր իւր եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ — Այս պատուէրը, աստուածային խորաթափանց իմաստութեան այս պատուէրը, փոխադարձաբար ալ ստոյգ է. այսինքն թէ, կնոջ մեծագոյն բարեկամն ալ այրն է միայն, ուստի եւ «Թողցէ կին զհայր եւ զմայր իւր եւ երթիցէ զհետ ատն իւրոյ։» — Այսպէս ուրեմն, այրը, ընկերական մարդ, պէտք ունի մշտնջենաւոր մեծ բարեկամի մը որ է կինը. եւ կինը, ընկերական արարած, պէտք ունի մշտնջենաւոր մեծ բարեկամի մը որ է այրը։ Եւ այս բարեկամութիւնը կը նուիրագործէ՝ առնանուրիւնը։

Ահա թէ ինչ է մեր ըմբռնումը ամուսնութեան մասին։ — Եզրակացութիւն — Եթէ համոզուեցաք ամուսնութեան ըմբռնումին՝ եզրակացութիւնը անհրաժեշտաբար պիտի ընդունիք։

Քանի որ երիտասարդ մը եւ երիտասարդուհի մը պէտք ունին մշտնջենաւոր մեծ բարեկամի մը՝ այդ մեծ բարեկամը իրենց ձեռքովը գտնելու են. երիտասարդը ինքը պէտք է ընտրէ իր կինը, կինն ալ ինքը ընտրելու է իր այրը։

Եւ որովհետեւ այս միակ մեծ բարեկամը փնտրելով գտնելը ամենէն փափուկ եւ ամենէն դժուար խնդիրներէն մէկն է՝ ամուսնութեան արդի դրութիւնը փոխել հարկաւոր է. ինչպէս կարելի է, ուշադրութիւն, խնդրեմ, ինչպէս կարելի է բոլորովին անձանօթ ընտանիքի մը մէջէն, մէկ շարթուան կամ մէկ ամուսնի ջնջին ժամանակամիջոցով մը, ակնարկուած մեծ բարեկամը կամ բարեկամուհին գտնել. այսպիսի հապճեպով, մութին մէջ գործուած ընտրութիւն մը վիճակահանութեան պէս բան մը պիտի ըլլայ (ինչպէս որ մտացի տիկին մը դիտել կուտար ինձ)։ Այո՛, կատարեալ վիճակահանութիւն, ուր զիպուածը մեծագոյն զերը կոչուած է խաղալ։ Ազնկատեսի այդ յոռի դրութիւնը փոխել պէտք է։ Ազնկին ու երիտասարդը կանխաւ զիրար ճանչցած ըլլալու են, իրարու գաղափարները մօտէն չօչափած, եւ ապա միայն կատարեալ գիտակցութեամբ եւ ներքին համոզմամբ իրարու ձեռք կարկառելու են։

Երիտասարդ մը կամ երիտասարդուհի մը իր տարիքին փիղիղակաւ եւ մտաւորական ոյժերէն օգտուելու համար պէտք է որ խոհալ մը ունենայ. առանց իտէպի երիտասարդն կամ երիտասարդուհին՝ կը նմանի առանց կողմնացոյցի նաւու մը՝ կեանքի ովկէանոսին մէջ։ Եւ ինչ աւելի մեծ խոհալ քան մշտնջենաւոր ընկերին կամ ընկերուհւոյն տենչը երազուն։ Շատ անգամ մոտախալար կնոջ մը պատկերը, որուն մշտնջենապէս օր մը կապուելու յուսովը կ'օրօրուինք, ինչ մեծ ազդեցութիւն կ'ընէ մեր անհատական ու հանրային կեանքին վրայ. ինչ մեծ բարոյական քաջութիւն կը պարգեւէ մեզ՝ կեանքի պայքարը անվկանդ մը՝ զելու. ինչ տոհմասիրական ու մարդասիրական թռիչներ կուտայ մեզի։ Բայց երբ առանց այդպիսի խոհալի մը, առանց որոշ նպատակի, առանց չափուած ձեւուած առաջադրութեան մը, օրն 'ի բուն կ'աշխատինք ու կ'աշխատինք՝ միշտ միտքերնիս չարչրկելով թէ արդեօք օր մը որպիսի անձանօթ անկիւնէ մը որպիսի անձանօթ հարս մը պիտի գայ մեր ընտանեկան խաղաղութիւնը կամ ամ-

բաւնդել կամ խանգարել՝ ու երբ մշտնջենաւոր հարցը կը ներկայանայ մեր առջին թէ, այսպիսի պայմաններու մէջ ամուսնանալը լաւագոյն պիտի ըլլայ թէ չամուսնանալը՝ ապահովապէս շատ նախանձելի վիճակի մը մէջ գտնուած չենք ըլլար։ Միեւնոյն խորհրդածութիւնները պիտի ընէ եւ համանման եզրակացութիւններ պիտի հանէ աղջիկն ալ, ինչ տեսակ ամուսին մը պիտի ունենայ արգեօք խեղճը, բարձր թէ գէշ. եւ արդեօք այս անստուգութեան մէջ լաւագոյն չպիտի ըլլայ բնաւ չամուսնանալ։ Ահա այս կերպով երկու կողմէն ալ իտէպի անէացում, որ հոգեկան կեանքի անէացում կ'ենթադրէ։

Դրութիւնը փոխել պէտք է. մանչ ու աղջիկ իրարու համակրելու, զիրար սիրելու եւ յետոյ միայն իրարու հետ ամուսնանալու են։

• • •

Կարծես արգէն կը լսեմ այն ահադին, խըցուցիչ աղմուկը որ կը բարձրանայ զաղափարներուս ետեւէն։ Տգէտ ծնողքներ կը սկսին միաբերան աղաղակել. — «Վայ մեղքիս, առ ինչ անամօթութիւն է. աղջիկները սիրահարելու են եղեր, չը խզնած չ'ամչցածներ, ինչ օրերու հասանք...»



Չենք մեղադրեր այդ խեղճ, բարի մարդիկը. շատ մը ուրիշ ըմբռնումներու պէս՝ սիրահարութեան ըմբռնումն ալ սխալ հասկեցում է մեր մէջ։ Սիրահարութիւն ըսելով ընդհանրապէս կը հասկնանք այն թեթեւոյիկ ժամանցը որ կը կայանայ կեղծ ժպիտներու, համբոյրներու եւ սուտ հաւաքներու փոխանակութեան մէջ. այս չինձու կենցաղը երկու սեռէն ալ շատեր կը վարեն յաճախ։ Այսպիսի կեանք մը վարող երիտասարդը կամ օրիորդը այսօր հաճոյքի ժամեր կ'անցունէ այս ինչին, վաղը միւսին եւ հետեւեալ օրը ուրիշի մը հետ. բայց ասոր սիրահարութիւն անունը տալ չէ ներքի, ու երբ ծնողք այսպիսի կենցաղէ

մը կը զգուշացնեն իրենց մանչերն ու աղջիկները՝ կատարելապէս իրաւունք ունին։ Պէտք է գիտնալ որ սիրահարութիւնը թէպէտ ֆիզիքական կրապոյրներէ կը սկսի յաճախ՝ բայց անմիջապէս յետոյ նիւթական ամէն գոյն թօթափելով՝ կը վերածուի լոկ հոգեկան, լոկ իտէպական կացութեան մը. այլ եւս նիւթը չէ որ կը պաշտենք, այլ նիւթին գաղափարական արտայայտութիւնը. բուն սիրահարութիւնը՝ հոգեւոյ մշտական եւ աստիճանական ազնուացումն է որ իր մէջ ոչինչ ունի կեղտոտ կամ տուփական։ Այսպիսի սիրահարութիւն մը արգիլելէ աւելի մաղթել պէտք է մեր նոր սերունդին. զի, ինչպէս ուրիշ տեղ զիտել տուինք՝ բարոյական մեծ զօրութիւն մը կը պարզուէ մեր դողդոջ քայլերուն՝ կեանքի դժուարին ճամբուն վրայ։

Բայց երբ մեր աղջիկներուն այսպիսի արտօնութիւն մը տանք՝ շատ յիմար ընտրութիւններ չպիտի ընեն։ — Երիտասարդութիւնը անփորձ է եւ իր անփորձութիւնովը կրնայ յաճախ սխալ քայլեր առնել կեանքի ճամբուն մէջ. ծնողք ի հարկէ իրենց փորձառութենէն եւ իմաստութեանէն բաժին պիտի հանեն իրենց չափահաս զաւակներուն եւ Զանք պիտի չխնային զանոնք համոզել՝ երբ սխալ ճամբու մը հետեւին. մենք ծնողական խրատը չենք ուրանար, խնդիրը զաւակաց վրայ ճնշում չը բանեցունելուն մէջ կը կոյանայ՝ ծնողք պիտի առաջնորդեն իրենց աղջիկներուն երբ առաջնորդելու կարող են, մնացածը ձգելով անոնց ազատ կամքին։ Չենք ընդունիր որ ամէն աղջիկ անպատճառ յիմար ընտրութիւններ կ'ընէ. անշուշտ յիմար ընտրութիւններ ընողներ պիտի գտնուին, բայց ասիկա պատճառ մը չէ որ դրութիւնը դատապարտենք. աշխարհի ամենէն կատարեալ դրութիւններն անգամ իրենց անպատահութիւններն ունին. դրութեան մը լաւ կամ վատ ըլլալը վճռու համար իր ընդհանուր գիծերուն մէջ զանի քննել պէտք է։ Արդ, մեր փատագոված դրութիւնը իր բոլոր անպատահութիւններովն հանդերձ շատ աւելի մեծ առաւելութիւններ ունի՝ քան թէ արդի սովորութիւնը։

Մեր սրաշտպանած դրութեան կատարեալ բարիքները վայելելու համար մեր աղջիկներուն տալու ենք ընտանեկան եւ դպրոցական հիմնաւոր դաստիարակութիւն մը : Շատեր կ'առարկեն որ իրենք դաստիարակուած աղջիկներ ալ տեսած են՝ առանց անոնց վրայ նշմարելու՝ պահանջուած բարեմասնութիւնները, եւ կը հետեւցնեն թէ դաստիարակութիւնը աղջկանց բարքերը չը բարւոքելէ զատ ուրեք ուրեք ալ մնաստկար կ'ըլլայ անոնց : Այսպէս խօսողներն կ'երեւայ թէ տակաւին չեն ըմբռնած դաստիարակութեան կատարեալ նշանակութիւնը . հաւանօրէն Դաստիարակութիւն եւ հմտութիւն բառերը իրարու հետ կը շփոթեն եւ այս կերպով ճրի զրպարտութիւն մը կ'ընեն առաջինին : Դաստիարակութիւնը կը նշանակէ գաղափարներու ճշտման անսկիւն մշակութիւն, որ ո՛չ Փրանսերէնի, ո՛չ անգլիերէնի, ո՛չ գրականութեան, ո՛չ դաշնակի, ո՛չ ալ արտաքին սեթեւեթեալ ձեւերու հետ գործ ունի . բայց այս մասին արդէն ընդարձակօրէն պիտի խօսինք մեր յաջորդ տետրին մէջ : Առ այժմ կը բաւէ ըսել թէ մեր ըմբռնած եղանակով դաստիարակութիւնը մեծագոյն բարիքը կը պարգեւէ աղջիկներուն՝ եւ ընտրեւագոյն գործիքը կ'ըլլայ իրենց կեանքի արժանաւոր բարեկամը, այսինքն ամուսինը գտնելու :

Բայց խնդիրը իր արդի վիճակին մէջ իսկ քննելով դարձեալ բարիքը ակներեւ է . հեռունները երթալու պէտք չկայ . առէք սիրահարութեամբ կատարուած ամուսնութիւնները . անոնցմէ գէթ կէսէն աւելին, արդի աննսխատ պայմաններուն մէջ իսկ, երջանիկ միութիւններ կազմած են . մինչդեռ աղջիկտեսի դրութիւնով կնքուած ամուսնութեանց մէկ չորրորդին համար իսկ նոյնը չենք կարող երաշխաւորել :



ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ – ԳՐԱՏՈՒՆ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Կը վանառուին ամէն տեսակ գրեան, վանա-
ռականական եւ դպրոցական պիտոյք, մեծ եւ փոքր
բանակութեամբ պատրաստութիւն, տպագր. գործոց.

Դպրոցաց գոհացուցիչ զեղչ:

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մուտքեան Մ. Ա.Ե. — Հովուական Աստուածաբա-

նութիւն	10 —
Ամուսնական խնդիրներ Ա. եւ Բ. մաս	2 1/2
Թէյեան Ե. — Համառօտ Իրազիտութիւն	2 1/2
Յովնաննէսեան Մ. — Իրական կեանքի Նուագներ	2 —
Մալաթեան Գ. — Կենդանական բնութագրութիւն	4 —
Բաղդասարեան . — Աստիճան վիպերգութիւն	10 —

Դրացանկ Նոր Հրատարակութեանց որ կը հրատարակուի
ամեն ամսոյ սկիզբն եւ կը պարունակէ նախորդ ամսոյ բոլոր
Հայերէն հրատարակութեանց ցանկն. այն Յանկ կ'ուղարկուի
բոլոր Գրավանառաց, Հրատարակչաց, Հեղինակաց եւ Վար-
ժարանաց ձեռք:

Պոլսոյ տարեկան բաժանորդագինն է	3 դր.
Գաւառաց »	6 դր.
Հասր	10 փր.

Հրատարակուեցաւ Յուլիոսի բիւն

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

Է. Մկրտիչեան. — Ամուսնական խնդիրներ Գ. Մաս, Էրիկ Կնիկ
Գ. Սիրունեան — Սկզբունք Անգղ. լեզուի
Վ. Գ. Զարդարեան. — Սէր քէ դրամ. Թատերգութիւն.

Գին 50 Փառայ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Գ. Եւ ՎԵՐՋԻՆ ՄԱՍ

Է Ր Ի Կ - Կ Ն Ի Կ

معارف نظارت جليله سنك ۱۲۸۷ نومرولى رخصتنامه سيلاه طبع اولتمشدر

Թղթավանառատուն - Գրատուն

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ, Պոլիս, Սուլթան-Համամ փողոց Թիւ 12

3435 3436
3437 3438
3439

<< Ազգային գրադարան



NL0030365

<< Ազգային գրադարան



NL0030364

<< Ազգային գրադարան



NL0030363

<< Ազգային գրադարան



NL0030362

<< Ազգային գրադարան



NL0030361

3435
3436
3437
3438
3439

